Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

«Վիվա Արմենիա» ՓԲԸ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն	8
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

«Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետերերին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի (նախկինում՝ «ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ) (Ընկերություն) և նրա դուստր ընկերության (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր

Grant Thornton

նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Նարինե Աճեմյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

4 հունիսի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	24,596,023	26,561,229
Ոչ նյութական ակտիվներ	5	11,566,102	11,871,620
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	6	4,263,784	4,323,121
Հետաձգված հարկային ակտիվներ	7	1,603,686	2,289,342
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար կանխավճարներ		2,305,083	899,956
		44,334,678	45,945,268
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	506,663	739,811
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	2,811,050	3,516,303
Տրամադրված փոխառություններ	10	20,895,006	15,712,450
Կարճաժամկետ փոխառություններ աշխատակիցներին		302,373	276,095
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	9,529,024	10,228,068
		34,044,116	30,472,727
Ընդամենը ակտիվներ		78,378,794	76,417,995

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	12		
Բաժնետիրական կապիտալ		550,000	550,000
Պահուստային կապիտալ		82,500	82,500
Կուտակված շահույթ		40,313,846	60,489,932
		40,946,346	61,122,432
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություններ	13	4,015,518	3,949,578
Պայմանագրային պարտավորություններ	14	44,500	53,540
		4,060,018	4,003,118
Ընթացիկ պարտավորություններ			
Պարտավորություններ շահաբաժինների գծով	12	21,669,500	-
Վարձակալության գծով պարտավորություններ	13	1,471,190	1,625,381
Պայմանագրային պարտավորություններ	14	1,445,315	1,230,011
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	7,341,091	6,928,204
Շահութահարկի գծով պարտավորություն		1,445,334	1,508,849
		33,372,430	11,292,445
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		78,378,794	76,417,995

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. հունիսի 4-ին:

Արմեն Ավետիսյան
Գործադիր տնօրեն

Լուսինե Զաքարյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ պայմանագրերից			
Շարժական կապի ծառայություններ	16	50,423,507	48,327,532
Ֆիքսված կապի ծառայություններ		1,200,162	1,218,669
Միջնորդավճարներից հասույթ		1,225,547	507,364
Ապրանքների վաճառքից հասույթ		531,265	827,599
Այլ եկամուտ			
Այլ գործառնական եկամուտ		316,085	492,806
		53,696,566	51,373,970
Մաշվածություն և ամորտիզացիա		(13,958,928)	(13,149,271)
Աշխատավարձ և այլ հատուցումներ աշխատակիցներին		(9,064,062)	(8,868,550)
Փոխկապակցման և ռոումինգի ծախսեր	17	(4,460,227)	(3,744,220)
Ցանցի շահագործման այլ ծախսեր	18	(6,687,580)	(6,415,733)
Վաճառված ապրանքների ինքնարժեք		(451,295)	(714,140)
Այլ գործառնական ծախսեր	19	(4,629,109)	(4,578,548)
		(39,251,201)	(37,470,462)
Գործառնական գործունեությունից շահույթ		14,445,365	13,903,508
Ֆինանսական եկամուտ	20	901,028	709,043
Ֆինանսական ծախս		(647,127)	(745,261)
Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)	21	129,608	(5,117,486)
Շահույթ մինչև հարկերը		14,828,874	8,749,804
Շահութահարկի գծով ծախս	22	(3,194,960)	(3,748,597)
Տարվա շահույթ		11,633,914	5,001,207
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		11,633,914	5,001,207

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապիտալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	70,488,725	71,121,225
Տարվա շահույթ	-	-	5,001,207	5,001,207
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	5,001,207	5,001,207
Շահաբաժիններ	-	-	(15,000,000)	(15,000,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(15,000,000)	(15,000,000)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	60,489,932	61,122,432
Տարվա շահույթ	-	-	11,633,914	11,633,914
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	11,633,914	11,633,914
Շահաբաժիններ	-	-	(31,810,000)	(31,810,000)
Գործարքներ սեփականատերերի հետ	-	-	(31,810,000)	(31,810,000)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	40,313,846	40,946,346

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա շահույթ	11,633,914	5,001,207
Ճշգրտումներ՝		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	13,961,700	13,144,591
Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից վնաս/(օգուտ)	(22,564)	34,350
Շահութահարկի գծով ծախս	3,194,960	3,748,597
Ֆինանսական եկամուտ	(901,028)	(709,043)
Ֆինանսական ծախս	647,127	745,261
Տրամադրված փոխառությունների արժեզրկման հակադարձում	-	(172,780)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս, զուտ	(129,608)	5,117,486
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	28,384,501	26,909,669
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	735,155	(243,811)
Պաշարների փոփոխություն	233,148	638,645
Աշխատակիցներին տրամադրված փոխառությունների փոփոխություն	(26,278)	(19,563)
Պայմանագրային պարտավորությունների փոփոխություն	206,264	(15,108)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(1,344,310)	2,026,689
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	28,188,480	29,296,521
Վճարված շահութահարկ	(2,572,819)	(3,359,432)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	25,615,661	25,937,089

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(11,249,095)	(10,836,703)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր	57,349	63,513
Տրամադրված փոխառությունների մարում	9,107	-
Փոխառությունների տրամադրում կապակցված կողմերին	(11,970,929)	-
Ավանդների ներդրում	-	(964,590)
Ավանդների մարում	-	10,204,526
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(23,153,568)	(1,533,254)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Վարձակալության գծով պարտավորությունների մարում	(2,439,662)	(2,325,226)
Շահաբաժինների վճարում	-	(15,000,000)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(2,439,662)	(17,325,226)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)	22,431	7,078,609
Բանկերում մնացորդներից ստացված տոկոսային եկամուտ	186,591	126,579
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(908,066)	(1,288,594)
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա սկզբում	10,228,068	4,311,474
Դրամական միջոցների և դրանց համարժեքներ տարվա վերջում	9,529,024	10,228,068

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 53-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը (նախկինում՝ «ՄՏՍ Արմենիա» ՓԲԸ) («Ընկերություն», դուստր ընկերության հետ միասին՝ «Խումբ») ստեղծվել է 2004թ. նոյեմբերին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: 2024թ. մարտի 25-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրացված փոփոխության համաձայն՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն վերանվանվել է «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի:

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության (ներկայումս Բարձր տեխնոլոգիաների նախարարություն) կողմից 2004թ. նոյեմբերի 4-ին տրված «Հեռահաղորդակցության ծառայությունների մատուցում» թիվ 765 լիցենզիայի հիման վրա՝ 15 տարով, որը երկարեցվել է մինչև 2034թ. նոյեմբերի 4-ը՝ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝ 2019թ. նոյեմբերի 1-ին ընդունած թիվ 403Ա որոշման հիման վրա:

Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը վերահսկվել է «Արամայո Ինվեսթմենթս Լիմիթեդ»-ի կողմից, որին պատկանում էր Խմբի բաժնետոմսերի 100%-ը: Խմբի գլխավոր մայր ընկերությունն էր «Սիստեմա» բաժնետիրական ֆինանսական կորպորացիան («Սիստեմա» ԲՖԿ), որը ստեղծվել է Ռուսաստանում և գտնվում է ք. Մոսկվա 125 009, փ. Մոխովայա 13 հասցեում: «Սիստեմա» ԲՖԿ-ի բաժնետոմսերը շրջանառվում են Մոսկվայի ֆոնդային բորսայում՝ AFKS ծածկագրի ներքո: 2024թ. հունվարին Ընկերությունը հայտարարեց իր բաժնետիրոջ փոփոխության մասին և որ այլևս չի պատկանում ռուսական «ՄՏՍ» խմբին: Ընկերությանը նոր բաժնետերը «Ֆեդիլքո Գրուպ Լիմիթիդ»-ն է, ընկերություն, որը պատշաճ կերպով ստեղծվել է Կիպրոսում և Նիկոսիայի առևտրային ռեգիստրում գրանցվել է HE 433524 համարի ներքո: Գործարքը գրանցվել է 2024թ. հունվարի 23-ին:

Սույն ֆինանսական հաշվետվությունները համախմբվում են «Մոբայլ ՏելեՍիսթեմս» ՀԲԸ-ի («ՄՏՍ» ՀԲԸ) կողմից: 2003թ.-ից «ՄՏՍ» ՀԲԸ-ի սովորական բաժնետոմսերը ցուցակված են Մոսկվայի ֆոնդային բորսայում՝ «MTSS» ծածկագրի ներքո:

Խումբը հիմնականում ներգրավված է հեռահաղորդակցման ծառայությունների մատուցման բնագավառում՝ ներառյալ անլար և ֆիքսված կապի միջոցով ձայնային և տվյալների փոխանցման, ինտերնետի տրամադրման, ավելացված արժեքի տարատեսակ ծառայությունների մատուցման մեջ, ինչպես նաև իրականացնում է բջջային հեռախոսների և աքսեսուարների վաճառք: Ընկերությունն ունի ծառայությունների մատուցման կենտրոնների լայն ցանց, ներառյալ ծառայությունների մատուցման 73 կենտրոն Երևանում և մարզերում: 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակտիվ բաժանորդների քանակը 2,316,656 է (2022թ. դեկտեմբերի 31 դրությամբ՝ 2,266,979):

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են «ՄոբիԴրամ» փակ բաժնետիրական ընկերության («Դուստր ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները: Դուստր ընկերությունում Ընկերության մասնաբաժինը 100% է: Դուստր ընկերությունը ստեղծվել է 2011թ. օգոստոսին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: Դուստր ընկերությունն իր գործունեությունն

իրականացնում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից տրված «Դրամական (փողային) փոխանցումների իրականացման» թիվ 15 լիցենզիայի հիման վրա: Դուստր ընկերության հիմնական գործունեությունն է վճարային և վճարահաշվարկային ծառայությունների տրամադրումը:

Ընկերության գրանցված գրասենյակը գտնվում է Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Արգիշտի փ. 4/1 հասցեում:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի աշխատակիցների թվաքանակը կազմել է 1,147 (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,104 աշխատակից):

Գործարար միջավայր

Խումբն իր հիմնական գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, այն ենթակա է Հայաստանի տնտեսական և ֆինանսական շուկաների ազդեցությանը, որոնք բնորոշ են զարգացող շուկաներին: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Իրավական, հարկային ու օրենսդրական համակարգերը ենթակա են տարբեր մեկնաբանությունների, որոնք այլ իրավական և հարկաբյուջետային խոչընդոտների հետ միասին նպաստում են Հայաստանում գործող կազմակերպությունների առջև ծառացած մարտահրավերներին: Հայաստանի տնտեսության կայունությունն ու զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը վերահաստատել է իր հավատարմությունը լավ կառավարման սկզբունքներին, այդ թվում՝ հակակոռուպցիոն, թափանցիկության և հաշվետվողականության:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում սրվել է 2020թ. Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Արցախյան 44-օրյա պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն: 2023թ. սեպտեմբերին տեղի ունեցավ շուրջ 120,000 արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան, որը լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

Ուկրաինայում պատերազմի արդյունքում շատ առաջատար երկրներ և տնտեսական միություններ խիստ տնտեսական պատժամիջոցներ են սահմանել Ռուսաստանի և Բելառուսի նկատմամբ՝ ներառյալ ռուսական բանկերի, այլ իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ: Պատերազմի սկզբից ի վեր նկատվել է ռուսական ռուբլու՝ արտարժույթի նկատմամբ զգալի անկայունություն, ինչպես նաև՝ Ռուսաստանի արժեթղթերի շուկայում և այլ շուկաներում ցուցակված ռուսական ընկերությունների արժեքի զգալի կորուստ: Իրավիճակը դեռ չի հանգուցալուծվել, սակայն այն արդեն հանգեցրել է հումանիտար ճգնաժամի և հսկայական տնտեսական կորուստների ինչպես Ուկրաինայում, այնպես էլ Ռուսաստանում և ամբողջ աշխարհում: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի նշանակալի առևտրային գործընկեր է, ուստի Ռուսաստանի նկատմամբ կիրառված պատժամիջոցները, ինչպես նաև այդ պատժամիջոցների ուժգնացումը էական ազդեցություն են ունեցել Հայաստանի Հանրապետության տնտեսության և ֆինանսական շուկայի վրա:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը

ծավալել են այդ երկրներում: Այդ հանգամանքը նպաստել է հայկական շուկա արտարժույթի ներհոսքի աճին, ինչը դրական ազդեցություն է ունեցել Հայաստանի տնտեսության վրա, ինչի արդյունքում ընդհանուր առմամբ գրանցվել է երկնիշ աճ: Խմբի ղեկավարությունը հետևում է տնտեսական ընթացիկ իրավիճակին: Քանի որ պատերազմը դեռևս շարունակվում է, հնարավոր չէ հուսալիորեն գնահատել այն վերջնական ազդեցությունը, որը կարող է այն ունենալ Խմբի գործունեության վրա, քանի որ ընդհանուր տնտեսության վրա դրա ազդեցության աստիճանի վերաբերյալ առկա է անորոշություն:

Տվյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են Ընկերության և իր բոլոր դուստր ընկերությունների՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից: Դուստր ընկերութան ֆինանսական հաշվետվություններում հայտարարված գումարներն անհրաժեշտության դեպքում ճշգրտվել են, որպեսզի ապահովվի Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանությունը:

2.4 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:

Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Առավել մեծ դատողություն պահանջող և բարդություն ներկայացնող էական ոլորտները, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատումներն էական են համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 23-ում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները առաջին անգամ են կիրառվել 2023թ.:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 12	Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)*

Բացառությամբ սույն ծանոթագրության մեջ բացահայտված *Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ* ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ *Գործնական կիրառություն 2* ստանդարտների ստորև ներկայացված փոփոխությունների, այլ ստանդարտներն ու փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – Փոփոխություններ ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2

ՀՀՄՍ 1-ում և ՖՀՄՍ *Գործնական կիրառություն* 2-ում («Էականության մասին դատողությունների կիրառում»), փոփոխությունները ներկայացնում են ուղեցույցներ և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառել հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտումների վերաբերյալ էականության դատողությունները: Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին ներկայացնել հաշվապահական հաշվառման քաղաքականության առավել օգտակար բացահայտումները՝ փոխարինելով «նշանակալի» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջը «էական» հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման պահանջով և ավելացնելով ուղեցույց այն մասին, թե կազմակերպություններն ինչպես պետք է կիրառեն էականության հայեցակարգը հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտման վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	**Ստանդարտի կամ մեկնաբանության անունը**	**Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի**
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՖՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ ընթացիկ պարտավորություններ կովենանտների հետ* *(ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*

2.7 Դուստր ընկերություններ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներառված են հետևյալ դուստր ընկերությունը.

Դուստր ընկերություն	Մասնա-բաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ
«ՄոբիԴրամ» ՓԲԸ	100%	Հայաստանի Հանրապետություն	2 օգոստոսի 2011թ.

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություններ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 2.6-ում, Խումբը վերանայել է հաշվապահական հաշվառման քաղաքականությունների իր բացահայտումը՝ համաձայն Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների բացահայտում – *Փոփոխություններ ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական ցուցումներ* 2 ստանդարտների փոփոխությունների: Բացահայտումները հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ ավելի պարզեցվել են և հստակեցվել՝ բացառելով ոչ էական հարցերի վերաբերյալ հաշվապահական հաշվառման քաղաքականությունները, ինչպես նաև ընդհանուր բնույթի տեղեկատվությունը, որը միայն կրկնօրինակում է ՖՀՄՍ-ների պահանջները:

3.1 Արտարժույթ

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը), բացառությամբ իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածների, որոնք վերահաշվարկվում են իրական արժեքի չափման օրվա դրությամբ գործող փոխարժեքով:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և

ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	-	20 տարի
Հեռահաղորդակցության սարքավորումներ	-	5-7 տարի
Հեռահաղորդակցության շինություններ	-	5-17 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	4-5 տարի
Համակարգչային տեխնիկա	-	3-7 տարի
Արտադրական և տնտեսական գույք	-	2-5 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Հեռահաղորդակցության սարքավորումների մաս կազմող ձեռքբերված ոչ նյութական ակտիվների ինքնարժեքը գումարվում է համապատասխան հեռահաղորդակցության սարքավորումների արժեքին և ամորտիզացվում է համապատասխան սարքավորումների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է՝

- իրավաբանորեն ամրագրված ժամանակաշրջան, իսկ դրա բացակայության դեպքում օգտակար ծառայության գնահատված ժամկետ, որը, սակայն չի գերազանցում 5 տարին հեռահաղորդակցության ծրագրերի, լիցենզիաների և ապրանքանիշերի համար, և

- իրավաբանորեն ամրագրված ժամանակաշրջան, իսկ դրա բացակայության դեպքում օգտակար ծառայության գնահատված ժամկետ, որը, սակայն չի գերազանցում 10 տարին այլ ակտիվների համար:

3.4 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խմբի վարձակալության պայմանագրերը մեծամասամբ վերաբերում են բջջային տեղակայաններին (մասնավորապես հող, բջջային աշտարակներում տարածք կամ կտուրներ), ցանցային ենթակառուցվածքներին, ծառայությունների մատուցման կենտրոններին, ինչպես նաև վարչական կամ տեխնիկական նպատակներով օգտագործված շենքերի վարձակալությանը:

Խումբը ճանաչում է վարձակալության բոլոր պայմանագրերի (ներառյալ ոչ նյութական ակտիվների ենթավարձակալությունն ու վարձակալությունը) հետ կապված օգտագործման իրավունքով ակտիվը և համապատասխան վարձակալական պարտավորությունը, որոնք փոխանցում են նշված ակտիվի օգտագործումը վերահսկելու իրավունքն ինչ-որ ժամանակահատվածով՝ հատուցման դիմաց, բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունները (12 ամիս կամ պակաս ժամկետով): Այդ վարձակալությունների համար Խումբը վարձակալության ժամկետի ընթացքում վարձակալական վճարները ճանաչում է որպես գործառնական ծախսեր: Վարձակալության բացահայտման ժամանակ Խումբն օգտագործում է ՖՀՄՍ 16-ի գործնական նպատակահարմարությունը, որը թույլ է տալիս վարձակալին չառանձնացնել պայմանագրի ոչ վարձակալական բաղադրիչները և փոխարենը հաշվառել վարձակալական և առնչվող ոչ վարձակալական բաղադրիչները որպես մեկ գործարք:

Օգտագործման իրավունքով ակտիվները սկզբնապես ճանաչվում են սկզբանական արժեքով, որը վարձակալական պարտավորության սկզբնական գումարն է հանած մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ արված ցանկացած վարձակալական վճարները, գումարած արված ուղղակի ծախսերը և սկզբնական ակտիվի ապամոնտաժման, հեռացման կամ վերականգնման գնահատված ծախսերը, հանած ստացված վարձակալության խրախուսումները:

Հետագայում օգտագործման իրավունքով ակտիվները հետագայում ամորտիզացվում են հետևյալ կերպ.

- եթե պայմանագիրը նախատեսում է հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին, կամ եթե ակնկալվում է, որ գնման օպցիոնը կիրականացվի, օգտագործման իրավունքով ակտիվը մաշվում է վարձակալի կողմից մինչև հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ավարտը,

- եթե պայմանագիրը չի նախատեսում հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքի փոխանցում վարձակալին, այն մաշվում է գծային սկզբունքով վարձակալության ակնկալվող ժամկետի ընթացքում:

Վարձակալության ժամկետը համապատասխանում է յուրաքանչյուր պայմանագրի չեղյալ չհայտարարվող ժամկետին, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը ողջամտորեն վստահ է, որ կիրառելու է երկարաձգման կամ դադարեցման հնարավորությունը: Վարձակալության ժամկետը գնահատելու ժամանակ Խումբը հաշվի է առնում այն բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք Խմբի համար վարձակալությունը երկարաձգման հնարավորությունը կիրառելու համար տնտեսական խթան են հանդիսանում, ինչպիսիք են վարձակալված վայրում գտնվող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը, վայրերի փոխարինման վիճակագրությունը, տեխնոլոգիական փոփոխության հերթականությունը, ծառայությունների մատուցման կենտրոնների շահութաբերությունը, ինչպես նաև վարձակալության պայմանագրերը լուծելու և կնքելու ծախսերը:

3.5 Մաշվող ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվներն արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստներն անմիջապես ճանաչվում են որպես ծախս շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ:

3.6 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով միջին կշռված մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.7 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան։

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով։

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները։

Ֆինանսական ակտիվներին առնչվող ամբողջ եկամուտը և ծախսերը, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, արտացոլված են ֆինանսական ծախսերում, ֆինանսական եկամուտում կամ այլ ֆինանսական արդյունքներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը արտացոլված է այլ ծախսերում։

Խմբի ֆինանսական ակտիվներն ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում։

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և և տրամադրված փոխառությունները։

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին (և չեն դասակարգված որպես իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով).

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ։

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը։ Այն դեպքերում, երբ զեղչման ազդեցությունը աննշան է, զեղչում չի կատարվում։

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ակնկալվող պարտքային կորուստները ճանաչելու համար ՖՀՄՍ 9-ում արժեզրկմանը ներկայացված պահանջներում օգտագործվում է ապագային առնչվող տեղեկատվություն՝ «Ակնկալվող պարտքային կորուստների մոդելը»։ ՖՀՄՍ 9-ի պահանջների շրջանակներում ընդգրկվող գործիքները ներառում են վարկերը և փոխառային տիպի այլ ֆինանսական

ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով, առևտրային դեբիտորական պարտքերը, պայմանագրային ակտիվները, որոնք ճանաչվել և չափվել են ՖՀՄՍ 15-ի համաձայն:

Պարտքային կորուստների ճանաչումը այլևս կախված չէ Խմբի՝ պարտքային կորուստը բնորոշող իրադարձության սկզբնական բացահայտումից: Փոխարենը, պարտքային ռիսկը գնահատելիս և ակնկալվող պարտքային կորուստները չափելիս Խումբը դիտարկում է տեղեկատվության ավելի ընդլայնված զանգված՝ ներառյալ անցյալ իրադարձությունները, ընթացիկ պայմանները, խելամիտ և հիմնավորված կանխատեսումները, որոնք ազդեցություն ունեն գործիքի ապագա դրամական հոսքերի ակնկալվող հավաքագրելիության վրա:

Առաջընթաց գնահատման մոտեցումը կիրառելիս առանձնացվում են հետևյալները.

- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն չեն վատթարացել կամ ունեն ցածր պարտքային ռիսկ («Փուլ 1») և
- ֆինանսական գործիքներ, որոնց պարտքային որակները սկզբնական ճանաչումից հետո էականորեն վատթարացել են և որոնց պարտքային ռիսկը ցածր չէ («Փուլ 2»):

«Փուլ 3»-ը ընդգրկում է այն ֆինանսական ակտիվները, որոնց մասով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա են արժեզրկման օբյեկտիվ ապացույցներ:

Առաջին դասի ակտիվների համար ճանաչվում են «12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստները», մինչդեռ «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստները» ճանաչվում են երկրորդ դասի ակտիվների համար: Ակնկալվող պարտքային կորուստների չափումը որոշվում է ֆինանսական գործիքի ակնկալվող գործողության ժամկետի պարտքային կորուստների հավանականության միջին կշռված գնահատումով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ

Խումբը հաշվառում է առևտրային և այլ դեբիտորական պարտքերը և պայմանագրային ակտիվները օգտվելով պարզեցված մոտեցումից և կորստի գծով պահուստը ձևակերպում է որպես գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ: Դրանք իրենցից ներկայացնում են պայմանագրային դրամական հոսքերի ակնկալվող դադարեցումները՝ հաշվի առնելով ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում ցանկացած պահի չմարվելու հնարավորությունը: Ակնկալվող պարտքային կորուստները հաշվարկելիս Խումբն օգտագործում է պահուստի մատրիցան՝ ելնելով պատմական փորձից, արտաքին ցուցանիշներից և ապագային առնչվող տեղեկատվությունից:

Խումբը գնահատում է առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկումը հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ, դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից: ՖՀՄՍ 9-ի՝ արժեզրկմանը ներկայացվող պահանջների կիրառման մանրամասն վերլուծությունն արտացոլված է ծանոթագրություն 25 (բ)-ում:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը և ֆինանսական վարձակալության գծով պարտավորությունները: Խմբի ֆինանսական պարտավորություններն ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 24.2-ում:

Վարձակալության գծով պարտավորություններ

Վարձակալության գծով պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են վարձակալական վճարների ներկա արժեքով, որոնք դեռ չեն վճարվել մեկնարկի ամսաթվին, զեղչվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրին ներհատուկ տոկոսադրույքով կամ, եթե այդ տոկոսադրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Խմբի հավելյալ վարկավորման լրացուցիչ փոխառության տոկոսադրույքով: Վարձակալական վճարները հիմնականում ներառում են ֆիքսված վճարները և վաղաժամ դադարեցման տուգանքները, եթե Խումբը ողջամտորեն վստահ չէ, որ վաղաժամ չի դադարեցնի:

Սկզբնական ճանաչումից հետո վարձակալության գծով պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Վարձակալության գծով պարտավորությունները վերաչափվում են այն ժամանակ, երբ Խումբը փոխում է գնահատականը՝ կապված այն բանի հետ, թե արդյոք կկիրառի, կերկարաձգի, թե կդադարեցնի գնման հնարավորությունը: Օգտագործման իրավունքով ակտիվների հաշվեկշռային արժեքում կատարվում է համապատասխան ճշգրտում կամ գրանցվում է շահույթում կամ վնասում, եթե օգտագործման իրավունքով հաշվեկշռային արժեքը նվազեցվել է զրոյի:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.8 Սեփական կապիտալ

Խմբի կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով:

Բաժնետիրական կապիտալն իրենից ներկայացնում է թողարկված բաժնետոմսերի նոմինալ արժեքը:

Կուտակված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.9 Պահուստներ

Պահուստը ճանաչվում է համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և, կիրառելիության դեպքում, պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

3.10 Շահութահարկ

Ընթացիկ հարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Խումբը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու կախված այն եղանակից, որով Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Խումբը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

3.11 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ

(կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.12 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հիմնականում շարժական և ֆիքսված կապի ծառայությունների մատուցումից (մուտքի վճարներ, ձայնա- և տեսազանգեր, կարճ հաղորդագրություններ, հեռահաղորդակցման վճարներ, ֆիքսված և շարժական լայնաշերտ կապի վճարներ), ինչպես նաև սարքերի ու աքսեսուարների վաճառքից:

Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ հաշվի առնելով Խմբի կողմից տրամադրված ցանկացած առևտրական զեղչերը և իջեցումների գումարները:

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Խումբը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը: Խումբը հասույթը ճանաչում է ժամանակի ընթացքում, բացառությամբ ապրանքների վաճառքից ստացված հասույթը, որը ճանաչվում է ժամանակի մեջ որևէ պահի:

Ապրանքներն ու ծառայությունները կարող են վաճառվել ինչպես առանձին, այնպես էլ փաթեթներով: Խումբն ապրանքներն ու ծառայությունները առանձին է հաշվառում, եթե դրանք պարզորոշ են, այսինքն ապրանքները կամ ծառայությունը, ինչպես նաև հաճախորդների օգուտները առանձին որոշելի են փաթեթի մեջ ներառված այլ ապրանքներից, և հաճախորդը կարող է օգուտ ստանալ դրանից: Բոլոր դեպքերում պայմանագրի գործարքի ամբողջ արժեքը բաշխվում է կատարման տարբեր պարտականությունների միջև՝ հիմնվելով դրանց համամասնական առանձին վաճառքի գների վրա:

Խումբը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց հաճախորդներից ստացված կանխավճարները և

արտացոլում է այդ գումարները համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պայմանագրային պարտավորություններ: Նման ձևով, եթե Խումբը բավարարում է կատարման պարտականությունը մինչև հատուցման ստանալը, Խումբը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Շարժական կապի ծառայություններ

Հասույթը չափվում է ձայնային և տվյալների տրաֆիկի մշակված փաթեթների ծառայությունների ծավալների հիման վրա կամ տրամադրված «pay as you go» (վճարում եք այնքան, որքան օգտագործում եք) գործարքների խոսելաժամանակով: Հասույթը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որում կապն ապահովվել է:

Բաժանորդագրական վճար

Բաժանորդագրական վճարը հիմնականում ներառում է շարժական ցանցի օգտագործման ամսական ֆիքսված վճարները, որոնք ճանաչվում են ծառայության մատուցման պահին: Միանգամյա չփոխհատուցվող ակտիվացման վճարները ճանաչվում են շարժական գծերի ակտիվացման ժամանակ այն ժամանակաշրջանում, որում ճանաչվում են դրանց հետ կապված ծախսերը:

Ավելացված արժեքի ծառայություններ

Սույն ծառայությունները ներառում են ՄՄՍ, Վիդեո քոլլ, Ռինգ բեք տոն և այլն: Ավելացված արժեքի ծառայություններից հասույթը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, երբ ծառայությունը մատուցվում է:

Ռոումինգի ծառայություններից հասույթ

Ռոումինգի ծառայություններից հասույթը ճանաչվում է այն ժամանակահատվածում, երբ ծառայությունները մատուցվում են, և ներառում է՝

- Արտասահմանյա երկրներում/ցանցերում շարժական կապի ծառայություններից օգտվելիս սեփական բաժանորդներից հաշվեգրված հասույթը. հասույթների այս հոսքը բաղկացած է ելքային ռոումինգի ծառայություններից հասույթից, որը գոյանում է արտասահմանում ձայնային, կարճ հաղորդագրությունների ծառայություններից և տվյալների օգտագործումից (ելքային ռոումինգ),
- Երկրում/ցանցում շարժական կապի ծառայություններից օգտվելիս արտասահմանից այցելության եկած բաժանորդներից հաշվեգրված հասույթը. հասույթների հոսքը բաղկացած է մուտքային ռոումինգի ծառայություններից հասույթից, որը գոյանում է երկրում/ցանցում ձայնային, կարճ հաղորդագրությունների ծառայություններից և տվյալների օգտագործումից (մուտքային ռոումինգ):

Փոխկապակցման ծառայություններից հասույթ

Տեղական և միջազգային հեռահաղորդակցության ծառայություններ մատակարարողների հետ ցանցային փոխկապակցման ծառայություններից հասույթը ճանաչվում է յուրաքանչյուր ամիս փաստացի մատուցված ծառայության հիման վրա:

Ֆիքսված ծառայություններ

Ֆիքսված ծառայություններից հասույթը հիմնականում բաղկացած է ծառայություններից օգտվելու ամսական ֆիքսված վճարներից և ճանաչվում է ժամանակի ընթացքում, երբ ծառայությունները մատուցվում են՝ օգտագործելով առաջընթացի ցուցանիշը: Այս ծառայությունները ներառում են ինտերնետը, հեռուստատեսությունը և IP հեռախոսակապը:

Ապրանքների վաճառքից հասույթ

Ապրանքների վաճառքից հասույթը (հիմնականում բջջային հեռախոսներ և այլ սարքեր) ճանաչվում է այն ժամանակ, երբ էական ռիսկերն ու սեփականության իրավունքի հետ կապված օգուտները փոխանցվել են հաճախորդին:

Միջնորդավճարներից հասույթ

Հասույթն առաջանում է վճարահաշվարկային ծառայությունների դիմաց վճարվելիք միջնորդավճարներից:

Վճարահաշվարկային ծառայությունները մասնավորապես ներառում են՝

- վճարումների ընդունումը կամ ստացումը շահառուի կամ այլ անձի միջոցով,
- երրորդ անձանց համար դրամարկղային գործառնությունների իրականացումը,
- պրոցեսինգի և քլիրինգի իրականացումը

Ծառայությունների մատուցման ընթացքը չափվում է ընդունված վճարումների, կանխիկացման գործառնությունների և դամական փոխանցումների ծավալի հիման վրա:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Հող, շենքեր, շինություններ և վարձակալված հիմնական միջոցների վրա կապիտալացված ծախսումներ	Ցանցային և կենտրոնական կայանի սարքավորումներ	Տրանսպորտային օբյեկտներ և կառուցվածքներ	Գրասենյակային սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ և արտադրատնտեսական գույք	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	3,965,723	134,918,202	20,365,784	4,064,154	163,313,863
Ավելացում	89,810	4,130,735	790,738	175,251	5,186,534
Օտարման հետևանքով դուրսգրում	(15,028)	(6,680,193)	(52,494)	(160,391)	(6,908,106)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,040,505	132,368,744	21,104,028	4,079,014	161,592,291
Ավելացում	98,106	3,471,006	389,960	186,739	4,145,811
Օտարման հետևանքով դուրսգրում	(16,097)	(3,407,770)	(23,602)	(139,403)	(3,586,872)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,122,514	132,431,980	21,470,386	4,126,350	162,151,230
Կուտակված մաշվածություն և արժեզրկում					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,990,606	116,824,067	12,585,939	3,370,270	135,770,882
Մաշվածություն	98,252	4,437,547	1,084,418	268,193	5,888,410
Օտարման հետևանքով դուրսգրում	(14,758)	(6,567,456)	(38,602)	(165,639)	(6,786,455)
Արժեզրկում	-	158,085	126	14	158,225
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,074,100	114,852,243	13,631,881	3,472,838	135,031,062
Մաշվածություն	74,923	4,421,101	1,046,118	240,270	5,782,412
Օտարման հետևանքով դուրսգրում	(16,097)	(3,383,980)	(14,115)	(137,895)	(3,552,087)
Արժեզրկում	3,253	268,103	6,396	16,068	293,820
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,136,179	116,157,467	14,670,280	3,591,281	137,555,207
Հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	966,405	17,516,501	7,472,147	606,176	26,561,229
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	986,335	16,274,513	6,800,106	535,069	24,596,023

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջովին մաշված հիմնական միջոցների սկզբնական արժեքը կազմել է 85,102,635 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 83,817,688 հազար դրամ):

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ժամանակավորապես չշահագործվող հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը կազմում է 1,288,419 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,206,771 հազար դրամ):

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համա-կարգչային ծրագրեր	Իրավունքներ և լիցեն-զիաներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	4,145,699	22,166,710	26,312,409
Ավելացում	472,994	4,772,120	5,245,114
Օտարում	(623,951)	(1,550,751)	(2,174,702)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,994,742	25,388,079	29,382,821
Ավելացում	467,843	5,461,113	5,928,956
Օտարում	(215,525)	(4,325,509)	(4,541,034)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,247,060	26,523,683	30,770,743
Կուտակված ամորտիզացիա			
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	2,534,645	11,821,888	14,356,533
Ամորտիզացիայի ծախս	633,041	4,720,117	5,353,158
Օտարման հետևանքով դուրսգրում	(623,845)	(1,574,645)	(2,198,490)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,543,841	14,967,360	17,511,201
Ամորտիզացիայի ծախս	600,535	5,633,939	6,234,474
Օտարման հետևանքով դուրսգրում	(215,525)	(4,325,509)	(4,541,034)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,928,851	16,275,790	19,204,641
Հաշվեկշռային արժեք			
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,450,901	10,420,719	11,871,620
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,318,209	10,247,893	11,566,102

6 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Հազար դրամ	Օպտիկաման-բաթելային գծեր	Ցանցային սարքավո-րումների տեղադրման տեղակայաններ	Սպասարկ-ման կենտրոններ	Վարչական շենքեր և պահեստներ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	1,382,704	7,159,554	2,103,705	214,918	10,860,881
Ավելացում	172,568	1,105,693	403,163	44,366	1,725,790
Դադարեցում և փոփոխություններ	-	(669,004)	(108,438)	-	(777,442)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,555,272	7,596,243	2,398,430	259,284	11,809,229
Ավելացում	93,371	1,315,842	335,215	448,746	2,193,174
Դադարեցում և փոփոխություններ	(883,012)	(1,138,465)	(491,221)	(471,049)	(2,983,747)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	765,631	7,773,620	2,242,424	236,981	11,018,656
Կուտակված մաշվածություն					
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	968,893	3,666,360	1,331,396	147,512	6,114,161
Մաշվածություն	245,719	1,051,634	363,250	84,195	1,744,798
Դադարեցման և փոփոխությունների հետևանքով դուրսգրում	-	(300,194)	(72,657)	-	(372,851)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,214,612	4,417,800	1,621,989	231,707	7,486,108
Մաշվածություն	145,018	1,078,622	370,476	56,878	1,650,994
Դադարեցման և փոփոխությունների հետևանքով դուրսգրում	(740,184)	(891,469)	(479,112)	(271,465)	(2,382,230)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	619,446	4,604,953	1,513,353	17,120	6,754,872
Հաշվեկշռային արժեք					
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	340,660	3,178,443	776,441	27,577	4,323,121
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	146,185	3,168,667	729,071	219,861	4,263,784

7 Հետաձգված հարկային ակտիվներ

Հետաձգված հարկային ակտիվների շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ

	2023թ.	2022թ.
Տարեսկզբի մնացորդ	2,289,342	3,465,113
Շահույթում կամ վնասում ճանաչված ծախս	(685,656)	(1,175,771)
Տարեվերջի մնացորդ	1,603,686	2,289,342

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ

	1 հունվարի 2023թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2023թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	1,327,993	(381,786)	946,207
Ոչ նյութական ակտիվներ	118,897	(106,017)	12,880
Վարձակալության գծով պարտավորություններ	973,302	(20,246)	953,056
Պաշարներ	114,366	6,503	120,869
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	400,705	(102,369)	298,336
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	132,241	(92,422)	39,819
Փոխանցվող հարկային վնասներ	29,712	(29,712)	-
	3,097,216	(726,049)	2,371,167
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	778,162	(10,681)	767,481
	778,162	(10,681)	767,481
Հետաձգված հարկային ակտիվների գնահատում	(29,712)	29,712	-
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	2,289,342	(685,656)	1,603,686

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	1 հունվարի 2022թ.	Շահույթում կամ վնասում ճանաչված	31 դեկտեմբերի 2022թ.
Հետաձգված հարկային ակտիվներ			
Հիմնական միջոցներ	1,868,240	(540,247)	1,327,993
Ոչ նյութական ակտիվներ	624,837	(505,940)	118,897
Վարձակալության գծով պարտավորություններ	1,025,965	(52,663)	973,302
Պաշարներ	46,486	67,880	114,366
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	468,507	(67,802)	400,705
Տրամադրված փոխառություններ	35,291	(35,291)	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	250,197	(117,956)	132,241
Փոխանցվող հարկային վնասներ	67,824	(38,112)	29,712
	4,387,347	(1,290,131)	3,097,216
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	854,410	(76,248)	778,162
	854,410	(76,248)	778,162
Հետաձգված հարկային ակտիվների գնահատում	(67,824)	38,112	(29,712)
Զուտ արդյունք - հետաձգված հարկային ակտիվներ	3,465,113	(1,175,771)	2,289,342

8 Պաշարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պահեստամասեր	247,964	281,880
Հետվճարային և կանխավճարային քարտեր	102,884	105,796
Բջջային հեռախոսներ և աքսեսուարներ	57,727	186,224
Այլ պաշարներ	98,088	165,911
	506,663	739,811

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ֆինանսական ակտիվներ		
Դեբիտորական պարտքեր շարժական կապի ծառայություններից	1,860,866	2,311,707
Դեբիտորական պարտքեր փոխկապակցման ծառայություններից	489,436	384,703
Դեբիտորական պարտքեր ռոումինգ ծառայություններից	71,839	1,136,688
Դեբիտորական պարտքեր դիլերներից	94,732	126,676
Դեբիտորական պարտքեր բջջային հեռախոսների վաճառքից	56,705	70,356
Այլ դեբիտորական պարտքեր	76,067	59,865
Ակնկալվող պարտքային կորուստների համար պահուստ	(199,653)	(720,190)
	2,449,992	3,369,805
Ոչ ֆինանսական ակտիվներ		
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար ընթացիկ կանխավճարներ	348,887	129,417
Կանխավճարված հարկեր	12,171	17,081
	361,058	146,498
	2,811,050	3,516,303

Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում: Ծառայությունների վաճառքից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է մեկ ամիս (2022թ.՝ մեկ ամիս): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Խմբի բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար: Արժեզրկման ենթակա առանձին դեբիտորական պարտքեր առկա չեն:

Առևտրային դեբիտորական պարտքերի համար ակնկալվող պարտքային կորստի գծով պահուստի շարժը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Կորուստների գծով պահուստը հունվարի 1-ի դրությամբ	720,190	1,389,983
Տարվա ընթացքում պահուստի աճ/(նվազում)	66,452	(66,678)
Տարվա ընթացքում դուրսգրված	(586,989)	(603,115)
Կորուստների գծով պահուստը դեկտեմբերի 31-ի դրությամբ	199,653	720,190

25 (բ) ծանոթագրությունում ներկայացված են պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային կորստի վերլուծության վերաբերյալ բացահայտումները:

Տե՛ս ծանոթագրություն 25 (ա)՝ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժույթների բացահայտման համար:

10 Տրամադրված փոխառություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Մոբայլ Տելեսիսթեմս» ՀԲԸ	20,895,006	15,703,443
«ՌԱՕ Մարս» ՓԲԸ	-	9,007
	20,895,006	15,712,450

«Մոբայլ Տելեսիսթեմս» ՀԲԸ-ին (մայր ընկերություն) տրված փոխառությունը տրամարդվել է դոլարով և ունի տարեկան 4% տոկոսադրույք:

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 25 (բ)-ում:

11 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ	8,976,737	9,776,823
Կանխիկ միջոցներ	23,874	30,659
Դրամական միջոցներ ճանապարհին	528,413	420,586
	9,529,024	10,228,068

Տե՛ս ծանոթագրություն 25 (ա)՝ դրամարկղում և բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար:

12 Կապիտալ և պահուստներ

12.1 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետոմսերի քանակը, եթե այլ բան նշված չէ	Սովորական բաժնետոմսեր 2023թ.	Սովորական բաժնետոմսեր 2022թ.
Հայտարարված և տեղաբաշխված բաժնետոմսեր		
Սովորական բաժնետոմսերի քանակը, յուրաքանչյուրը՝ 1,000 դրամ	550,000	550,000

Խումբն ունի սովորական բաժնետոմսերի մեկ դաս, որը հաստատուն եկամտի նկատմամբ իրավունք չունի:

12.2 Շահաբաժիններ

Համաձայն Ընկերության միակ բաժնետիրոջ որոշման՝ 2023թ. ընթացքում հայտարարված 9,000,000 հազար դրամ շահաբաժինները (առանց հարկերի) հաշվանցվել են «Մոբայլ Տելեսիսթեմս» ՀԲԸ-ին (Մայր ընկերություն) տրված փոխառության մնացորդից: 2023թ.

դեկտեմբերի 31-ի դրությամբ 21,669,500 հազար դրամի շահաբաժինների մնացորդը 2024թ. հունվարին հաշվանցվել է մնացած մնացորդով:

2022թ. սովորական բաժնետոմս ունեցող բաժնետերերին վճարվել է 15,000,000 հազար դրամ շահաբաժին:

12.3 Պահուստային կապիտալ

Պահուստային կապիտալին կուտակված շահույթից կատարվում են հատկացումներ, ինչը կարգավորվում է Ընկերության կանոնադրությամբ՝ համաձայն որի Ընկերությունը պարտավոր է ստեղծել պահուստ՝ բաժնետիրական կապիտալի առավելագույնը 15%-ի չափով: Պահուստային կապիտալի նպատակը ապագա վնասները ծածկելն է:

13 Վարձակալության գծով պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Նվազագույն վարձակալական վճարներ, ներառյալ՝		
Մինչև 1 տարի	2,071,907	2,225,120
1 տարուց մինչև 5 տարի	4,392,931	4,231,444
5 տարուց ավելի	1,600,025	2,011,519
	8,064,863	8,468,083
Հանած՝ տոկոսը ներկայացնող գումար	2,578,155	2,893,124
Նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեք, ներառյալ՝		
Մինչև 1 տարի	1,471,190	1,625,381
1 տարուց մինչև 5 տարի	3,271,006	3,087,748
5 տարուց ավելի	744,512	861,830
	5,486,708	5,574,959
Ներառյալ՝		
Ընթացիկ	1,471,190	1,625,381
Ոչ ընթացիկ	4,015,518	3,949,578

Խմբի՝ իր վարձակալական պարտավորությունները զեղչելու համար կիրառած միջին կշռված փոխառության տոկոսադրույքը եղել է 14%:

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում վարձակալական պարատավորությունների գծով հաշվարկված տոկոսի ծախսը կազմել է 647,127 հազար դրամ (2022թ.՝ 745,261 հազար դրամ) և ներառվել է «ֆինանսական ծախսերի» մեջ:

14 Պայմանագրային պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Շարժական կապի ծառայությունների կանխավճարներ	921,304	944,076
Ռոումինգի դեպոզիտներ	44,500	53,540
Ստացված այլ կանխավճարներ	524,011	285,935
	1,489,815	1,283,551

Պայմանագրային պարտավորությունները ներկայացնում են հաճախորդների կողմից Խմբին վճարված այն գումարները, որոնք արվել են նախքան պայմանագրով խոստացված ապրանքների ու ծառայությունների ստացումը:

Տարվա սկզբին պայմանագրային պարտավորություններում ներառված հասույթը կազմել է 1,664,846 հազար դրամ (2022թ. դեկտեմբերի 31՝ 1,474,271 հազար դրամ):

2024թ. ընթացքում 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային պարտավորությունների ողջ գումարը Խումբն ակնկալում է ճանաչել որպես հասույթ:

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,538,153	2,084,804
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին	1,503,860	2,068,885
Պարտավորություններ պետական բյուջեին	2,645,322	1,545,706
Հեռահաղորդակցման սարքավորումների և ծրագրերի ձեռքբերման համար կրեդիտորական պարտքեր	247,458	16,659
Այլ կրեդիտորական պարտքեր և հաշվեգրումներ	1,406,298	1,212,150
	7,341,091	6,928,204

Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

Խմբի արտարժութային ռիսկի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն ներկայացված է ծանոթագրություն 25 (ա)-ում:

16 Շարժական կապի ծառայություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
GPRS-ից հասույթ	27,240,468	25,582,382
Ձայնային ծառայություններից հասույթ	10,708,457	11,083,066
Փոխկապակցման ծառայություններ	4,953,727	5,008,358
SMS-ից հասույթ	3,682,757	3,267,062
Ռոումինգ ծառայություններ	1,588,220	1,131,788
Բաժանորդագրությունից հասույթ	870,486	959,158
Ավելացված արժեքի այլ ծառայություններ	1,190,115	1,063,845
Այլ հասույթ	189,277	231,873
	50,423,507	48,327,532

17 Փոխկապակցման և ռոումինգի ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Փոխկապակցման ծախսեր	3,548,039	3,104,802
Ռոումինգի ծախսեր	912,188	639,418
	4,460,227	3,744,220

18 Ցանցի շահագործման այլ ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ռադիոհաճախականության օգտագործման վճարներ	3,097,209	2,881,236
Բիլինգ համակարգի և ցանցային սարքավորումների սպասարկում	1,135,411	1,119,975
Էլեկտրաէներգիա	1,294,158	1,243,484
GPRS-ի գծով ծախսեր	240,942	273,517
Կարճաժամկետ վարձակալություն	269,700	240,100
Կոնտենտ ծառայություններ	637,514	565,010
Այլ	12,646	92,411
	6,687,580	6,415,733

19 Այլ գործառնական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Վաճառքի և գովազդի ծախսեր	545,623	607,787
Դիլերների միջնորդավճարներ	529,025	527,801
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	572,152	555,494
Հավաքագրման ծախսեր գործակալներից	418,864	194,385
Բանկային ծախսեր	408,105	182,256
Նվիրատվություններ և հովանավորչություն	220,230	365,200
Ապրանքանիշերի ռոյալթիների վճար	207,123	194,095
Հարկեր ծախսեր և պետական տուրքեր	222,234	478,198
Անվտանգություն	190,986	183,728
Գործուղման և դասընթացների գծով ծախսեր	153,262	170,187
Պաշարների արժեզրկում	159,739	391,774
Այլ ծասխեր	1,001,767	727,643
	4,629,109	4,578,548

20 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտ տրամադրված փոխառություններից	714,437	609,807
Բանկային ավանդներից տոկոսային եկամուտ	-	45,699
Դրամական միջոցների և դրանց համարժեքների տոկոսային եկամուտ	186,591	53,537
	901,028	709,043

21 Փոխարժեքային տարբերությունից զուտ օգուտ/(վնաս)

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական ակտիվներ՝ չափվող ամորտիզացված արժեքով	178,133	(5,406,488)
Ֆինանսական պարտավորություններ՝ չափվող ամորտիզացված արժեքով	(48,525)	289,002
	129,608	(5,117,486)

22 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	2,440,171	2,572,838
Ընթացիկ տարում ճանաչված՝ նախորդ տարվա հարկին վերաբերող ճշգրտումներ	69,133	-
Հետաձգված հարկ	685,656	1,175,759
	3,194,960	3,748,597

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ-ների)	14,828,874		8,749,804	
Շահութահարկ՝ 18% դրույքաչափով (2022թ.՝ 18%)	2,669,197	18.0	1,574,965	18.0
(Չհարկվող եկամուտ)/ չնվազեցվող ծախսեր, զուտ	268,806	1.8	2,009,290	23.0
Տրանսֆերային գնագոյացման ազդեցությունը	217,536	1.5	164,342	1.9
Կուտակված հարկային վնասի օգտագործում	(29,712)	(0.2)	-	-
Ընթացիկ տարում ճանաչված՝ նախորդ տարվա ընթացիկ հարկին վերաբերող ճշգրտումներ	69,133	0.5	-	-
Շահութահարկի գծով ծախս	3,194,960	21.6	3,748,597	42.9

23 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

23.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները, որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հեռահաղորդակցության համակարգի և առնչվող ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետ

Խմբի ղեկավարությունը գնահատել է հեռահաղորդակցության համակարգի և առնչվող ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետը մինչև 7 տարի է: Այս գնահատումը հիմնված է Խմբի՝ շահագործվող համակարգի օգտագործումը շարունակելու մտադրությունների վրա:

Գնահատականները կարող են փոխվել տեխնոլոգիական զարգացման, մրցակցության, շուկայում փոփոխվող պայմանների և այլ գործոնների փոփոխությունից և կարող են հանգեցնել օգտակար ծառայության ժամկետի և ամորտիզացիայի ու մաշվածության ծախսերի փոփոխության: Տեխնոլոգիական զարգացումը դժվար է կանխատեսել, և զարգացման ընդհանուր միտումների և արագության՝ ղեկավարության տեսակետը ժամանակի ընթացքում կարող է փոխվել: Որոշ ակտիվներ և տեխնոլոգիաներ, որոնցում Խումբը տարիներ առաջ ներդրում է կատարել, դեռ օգտագործվում են և նոր տեխնոլոգիաների հիմքն են հանդիսանում: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետների գնահատման հետ կապված կարևոր գնահատումները ներառում, բայց չեն սահմանափակվում լիցենզիաների մնացյալ ժամկետը և տեխնոլոգիական ու շուկայական ակնկալվող զարգացումները:

Տեխնոլոգիական, շուկայական, ինչպես նաև տնտեսական միջավայրերում, որտեղ Խումբը ծավալում է իր գործունեությունը, տեղի ունեցող արագ փոփոխությունները կարող են դրդել, որ Խմբի ղեկավարությունը փոփոխի առկա համակարգի հետագա օգտագործման վերաբերյալ իր պլանները: Եթե դա տեղի ունենա, հեռահաղորդակցության համակարգի փոխհատուցվող գումարը կարող է կտրուկ նվազել:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալական պարտավորություններ

Օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալական պարտավորությունների արժեքը հաշվարկվում է վարձակալության ժամկետի ղեկավարության գնահատականների հիման վրա, ինչպես նաև լրացուցիչ փոխառության տոկոսադրույքի, որն օգտագործվում է վարձակալական վճարը զեղչելու համար: Վարձակալության ժամկետը համապատասխանում է յուրաքանչյուր պայմանագրի վարձակալության չեղյալ չհայտարարվող ժամկետին, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը ողջամտորեն վստահ է, որ կիրառելու է երկարաձգման հնարավորությունը: Վարձակալության ժամկետը գնահատելու ժամանակ Խումբը հաշվի է առնում այն բոլոր փաստերն ու հանգամանքները, որոնք Խմբի համար վարձակալությունը երկարաձգման հնարավորությունը կիրառելու համար տնտեսական խթան են հանդիսանում, ինչպիսիք են վարձակալված վայրում գտնվող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը, վայրերի փոխարինման վիճակագրությունը, տեխնոլոգիական փոփոխության հերթականությունը, ծառայությունների մատուցման կենտրոնների շահութաբերությունը, ինչպես նաև վարձակալության պայմանագրերը լուծելու և կնքելու ծախսերը:

Այս գործոններում տեղի ունեցած փոփոխությունները կարող են ազդել գնահատված վարձակալության ժամկետի և օգտագործման իրավունքով ակտիվների և վարձակալական պարտավորությունների գրանցված արժեքների վրա:

Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստ

Խումբն օգտագործում է դատողություն՝ գնահատելու ամորտիզացված արժեքով ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների պահուստները: Ակնկալվող պարտքային կորուստները չափվում են անաչառ և հավանականության միջին կշռված գումարով, դրամի ժամանակային արժեքով և խելամիտ ու հիմնավորված տեղեկությամբ հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ՝ կապված անցյալ իրադարձությունների, ներկա պայմանների և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումների հետ: Պահուստի դրույքաչափերը հաշվարկվում են՝ հիմնվելով հաճախորդների տարբեր սեգմենտների խմբավորումներից առաջացած ժամկետանց օրերի վրա, որոնք կորստի նույնատիպ մոդել ունեն (օրինակ՝ ըստ աշխարհագրական դիրքի, ծառայության տեսակի, հաճախորդի տեսակի և վարկանիշի և պարտքային ապահովագրության տեսակների):

Ակնկալվող պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական միջոցների չվճարման հավանականության միջին կշռված ներկա արժեք յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի ակնկալվող գործողության ժամկետի ընթացքում: Ակնկալվող պարտքային կորուստները հիմնականում հաշվարկվում են՝ օգտագործելով վիճակագրական մոդելը, որը հիմնվում է ռիսկային երեք հիմնական պարամետրերի վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ժամանակ վնասի և դեֆոլտի դեպքում ռիսկի տակ գտնվող գումարը:

Սկզբնապես պահուստի մատրիցան հիմնված է Խմբի՝ պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների վրա: Խումբը ստուգել է պահուստի մատրիցան՝ պատմական պարտքային կորստի փորձառությունն ապագան կանխատեսող տեղեկության հետ ճշգրտելու համար: Այս տեղեկությունը ներառում է մակրոտնտեսական գործոնները (գործազրկության և գնաճի մակարդակը) և ապագա տնտեսական պայմանների կանխատեսումը: Տնտեսական պայմանների կանխատեսման ազդեցությունն ակնկալվող պարտքային կորուստների որոշման վրա աննշան է եղել: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցները թարմացվում են և փոփոխությունները վերլուծվում են ապագան կանխատեսող գնահատականներում:

Պարտքը չմարելու դիտարկված պատմական գործակիցների, տնտեսական պայմանների կանխատեսման և ակնկալվող պարտքային կորուստների միջև հարաբերակցության գնահատումը նշանակալի է: Ակնկալվող պարտքային կորուստների արժեքը հանգամանքների և կանխատեսվող տնտեսական պայմանների նկատմամբ զգայուն է: Խմբի պատմական պարտքային կորստի փորձառությունը և տնտեսական պայմանների կանխատեսումը կարող են չարտահայտել հաճախորդի՝ ապագայում սպասվող պարտքը չմարելու հավանականությունը: Խմբի առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կարուստների վերաբերյալ տեղեկությունը բացահայտված է ծանոթագրություն 25 (բ)-ում:

Կլիմային առնչվող հարցեր

Խումբը շարունակաբար իր գնահատումներում և դիտարկում է կլիմային առնչվող հարցերը: Այս գնահատումը ներառում է Խմբի վրա հնարավոր ազդեցությունների լայն շրջանակ՝ պայմանավորված ֆիզիկական և անցումային ռիսկերով: Այս ռիսկերը ներառում են ֆինանսական կորստի սպառնալիքը և անբարենպաստ ոչ ֆինանսական ազդեցությունները, որոնք ներառում են կլիմայի փոփոխության քաղաքական, տնտեսական և բնապահպանական արձագանքները: Այս ռիսկերը դառնում են կարգավորիչ, քաղաքական և հասարակական մարմինների մանրազնին ուսումնասիրության առարկա՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային մակարդակով: Թեև որոշ ֆիզիկական ռիսկեր կարող են կանխատեսելի լինել, սակայն դրանց դրսևորման չափի և ժամանակի վերաբերյալ էական

անորոշություններ կան: Անցումային ռիսկերի առումով անորոշությունները մնում են կարգավորող և քաղաքական շրջանակների մոտալուտ փոփոխությունների, սպառողների պահանջների և մատակարարման շղթաների փոփոխությունների ազդեցության հետ կապված:

Ֆինանսական հաշվետվությունների վրա կլիմայի փոփոխության երկարաժամկետ հետևանքները դժվար են կանխատեսել, և ղեկավարությունից պահանջվում է նշանակալի ենթադրություններ կատարել ու գնահատումներ մշակել: Շատ դեպքերում կիրառվող դատողությունները վերաբերում են ակտիվների փոխհատուցվող գումարին և մաշկող ակտիվների օգտակար ծառայության ժամկետներին:

Խումբը կարծում է, որ կլիմային առնչվող հարցերը չեն հանգեցնի ֆինանսական հաշվետվությունների յուրաքանչյուր հոդվածի հիմքում ընկած գնահատումների և ենթադրությունների էական անորոշության: Չնայած այն փաստին, որ կլիմային առնչվող ռիսկերը ներկայումս կարող են նշանակալի ազդեցություն չունենալ չափման վրա, Ֆոնդը ուշադիր հետևում է համապատասխան փոփոխություններին և զարգացումներին, ինչպիսին է կլիմայի վերաբերյալ նոր օրենսդրությունը:

24 Ֆինանսական գործիքներ

24.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.7-ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող		
Տրամարդված փոխառություններ	20,895,006	15,712,450
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,449,992	3,369,805
Կարճաժամկետ փոխառություններ աշխատակիցներին	302,373	276,095
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9,529,024	10,228,068
	33,176,395	29,586,418

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վճարվելիք շահաբաժիններ	21,669,500	-
Վարձակալության գծով պարտավորություններ	5,486,708	5,574,959
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	4,695,769	5,382,498
	31,851,977	10,957,457

25 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ֆինանսական գործիքների հետ կապված՝ Խումբը ենթարկվում է զանազան ռիսկերի: Այս ռիսկերն են շուկայական ռիսկը, պարտքային ռիսկը և իրացվելիության ռիսկը:

Առավել էական ֆինանսական ռիսկերը, որոնց Խումբը կարող է ենթարկվել, նկարագրված են ստորև:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, որը բխում է ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Խմբի՝ արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, որոնք, ի սկզբանե, արտահայտված են ԱՄՆ դոլարով և եվրոյով: Բացի այդ Խումբն ունի ԱՄՆ դոլարով տրամադրված փոխառություններ, բանկային հաշիվներ և վարձակալական պարտավորություններ:

Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Խմբին ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև: Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Յուան
Ֆինանսական ակտիվներ				
Տրամադրված փոխառություններ	20,895,006	-	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	36,277	529,033	13,598	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	548,291	144,269	361,319	77,916
	21,479,574	673,302	374,917	77,916
Ֆինանսական պարտավորություններ				
Վարձակալության գծով պարտավորություններ	3,715	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	329,248	598,076	84,910	-
	332,963	598,076	84,910	-
Զուտ դիրք	21,146,611	75,226	290,007	77,916

Հոդված

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի	Յուան
Ֆինանսական ակտիվներ				
Չապահովված փոխառություններ	15,712,450	-	-	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	42,765	1,386,585	14,266	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,582,907	2,324,424	101,708	56,510
	21,338,122	3,711,009	115,974	56,510
Ֆինանսական պարտավորություններ				
Վարձակալության գծով պարտավորություններ	116,706	-	-	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	405,184	1,019,234	970	-
	521,890	1,019,234	970	-
Զուտ դիրք	20,816,232	2,691,775	115,004	56,510

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ համապատասխան արտարժույթի նկատմամբ դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով:

Դրամի արժևորումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը Խմբի ֆինանսական արդյունքի վրա:

Հազար դրամ	2023թ.	2022թ.
ԱՄՆ դոլար	(2,114,661)	(2,081,623)
Եվրո	(7,523)	(269,178)
Ռուբլի	(29,001)	(11,500)

Արտարժույթի փոխարժեքի տատանման ազդեցությունը տարվա ընթացքում փոփոխվում է՝ կախված արտերկրյա գործարքների ծավալից: Այդուհանդերձ, վերը ներկայացված վերլուծությունը կարելի է համարել Խմբի՝ արտարժութային ռիսկին ենթարկվածության արտացոլումը:

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Պարտքային ռիսկի առավելագույն ազդեցությունը ներկայացված է հետևյալ ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներով՝

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրամադրված փոխառություններ	20,895,006	15,712,450
Փոխառություններ աշխատակիցներին	302,373	276,095
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,449,992	3,369,805
Մնացորդներ բանկերում	9,505,150	10,197,409
	33,152,521	29,555,759

Բանկերում մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է գումարները տարբեր բանկերում և բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Ընթացիկ հաշիվների մնացորդները պահվում են մի քանի բանկերում, որոնք ըստ S&P միջազգային վարկանշող կազմակերպության կողմից ունեն երկարաժամկետ ռիսկի B+ից - BB- վարկանիշ:

Աշխատակիցներին տրված փոխառությունների մասով պարտքային ռիսկն աննշան է, քանի որ պայմանագրային գործընկերները Խմբի աշխատակիցներն են:

Տրամադրված փոխառություններ

Ինչպես նկարագրված է ծանոթագրություն 10-ում, Խումբը 20,895,006 հազար դրամ (15,703,443 հազար ԱՄՆ դոլար) վարկ է տրամադրել «ՄՏՍ» ՀԲԸ-ին (Մայր ընկերություն):

Խմբի ղեկավարությունը եզրակացրել է, որ հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ այդ գումարների հետ կապված պարտաքային ռիսկ գոյություն չունի, քանի որ այդ մնացորդը կհաշվանցվի վճարվելիք շահաբաժիններով, հետևաբար ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստներ չեն հատկացվել (տե՛ս ծանոթագրություն 12.2)։

Առևտրային դեբիտորական պարտքեր

Պարտքային ռիսկի գծով կենտրոնացումը սահմանափակ է՝ Խմբի հաճախորդների բազայի մեծության և միմյանց հետ կապակցված չլինելու պատճառով։

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ։

Ակնկալվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվել են հավաքական հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ։

Ակնկալվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2023թ. դեկտեմբերի 31-ին նախորդող 2 տարվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակամիջոցում ձևավորված պատմական պարտքային կորուստները։ Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոններին, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա։ Խումբը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում հաճախորդների տեղակայման երկրների համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) և գործազրկության մակարդակը, և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոններով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով։ Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չի։

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են)։ Վճարում չկատարելը և Խմբի հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ։

Ելնելով վերը նկարագրվածից՝ առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստները, որոնք ներառում են շարժական կապի ծառայություններից, ռոումինգից և այլ դեբիտորական պարտքերը, 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մնացորդները ներկայացված են հետևյալ աղյուսակներում.

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ակնկալվող պարտքային կորուստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա-հատվածի ակնկալվող պարտքային կորուստներ
0 - 30	1%	1,525,068	13,111
31- 60	5%	154,819	8,470
61 - 90	14%	59,660	8,098
91 - 120	19%	37,858	7,072
121 - 150	21%	19,547	4,108
151 - 180	26%	16,616	4,281
181 - 210	32%	13,549	4,293
211 - 360	46%	58,530	27,096
361 և ավելի	100%	123,124	123,124
		2,008,772	199,653

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Ակնկալվող պարտքային կորուստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	Գործողության ամբողջ ժամանակա-հատվածի ակնկալվող պարտքային կորուստներ
0 - 30	1%	2,806,131	28,199
31- 60	20%	83,758	16,659
61 - 90	37%	33,847	12,635
91 - 120	55%	22,362	12,256
121 - 150	68%	21,047	14,341
151 - 180	77%	17,870	13,835
181 - 210	82%	15,698	12,939
211 և ավելի	100%	507,547	507,547
		3,508,260	618,411

Դիլերներից դեբիտորական պարտքերն ամբողջությամբ ապահովված են բանկային երաշխավորություններով, և այդ գումարների գծով պարտքային ռիսկն ընդունելի է: Հետևաբար ակնկալվող պարտքային կորուստների գծով պահուստ չի ստեղծվել:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները: Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Հազար դրամ	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Պարտավորություններ վարձալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	*Անտոկոս*	*14%*	
Մինչև 6 ամիս	4,695,769	1,157,917	5,853,686
6 ամսից մինչև 1 տարի	-	913,990	913,990
1-5 տարի	-	4,392,931	4,392,931
Ավելի քան 5 տարի	-	1,600,025	1,600,025
	4,695,769	8,064,863	12,760,632

	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
Հազար դրամ	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	Պարտավորություններ վարձալության գծով	Ընդամենը
Միջին կշռված արդյունավետ տոկոսադրույք	*Անտոկոս*	*14%*	
Մինչև 6 ամիս	5,382,498	1,254,330	6,636,828
6 ամսից մինչև 1 տարի	-	970,790	970,790
1-5 տարի	-	4,231,444	4,231,444
Ավելի քան 5 տարի	-	2,011,519	2,011,519
	5,382,498	8,468,083	13,850,581

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերն էականորեն գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը:

26 Ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորությունների համադրում

Խմբի՝ ֆինանսավորման գործունեությունից առաջացող պարտավորություններում փոփոխությունները կարող են դասակարգվել հետևյալ կերպ.

Հազար դրամ	Շահաբաժիններ	Վարձակալության գծով պարտավորություններ	Ընդամենը
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	-	5,875,397	5,875,397
Դրամային հոսքերից			
Մարումներ	(15,000,000)	(2,325,226)	(17,325,226)
Ոչ դրամային հոսքերից			
Հայտարարված շահաբաժիններ	15,000,000	-	15,000,000
Տոկոսի հաշվեգրում	-	745,261	745,261
Ավելացում	-	1,321,199	1,321,199
Փոխարժեքային տարբերությունից վնաս	-	(41,672)	(41,672)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	5,574,959	5,574,959
Դրամային հոսքերից			
Մարումներ	-	(2,439,662)	(2,439,662)
Ոչ դրամային հոսքերից			
Հայտարարված շահաբաժիններ	31,810,000	-	31,810,000
Շահութահարկի հաշվեգրում	(1,590,500)	-	(1,590,500)
Փոխառություններով հաշվանցված (ծան. 12.2)	(8,550,000)	-	(8,550,000)
Տոկոսի հաշվեգրում	-	647,127	647,127
Ավելացում	-	2,306,331	2,306,331
Դադարեցումներ		(600,429)	(600,429)
Փոխարժեքային տարբերությունից վնաս	-	(1,618)	(1,618)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	21,669,500	5,486,708	27,156,208

27 Իրական արժեքի չափում

Խումբը սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով չափվող ակտիվները և պարտավորությունները դասակարգում է 1-ից մինչև 3-րդ մակարդակներում՝ հիմնվելով իրական արժեքի դիտարկելիության աստիճանի վրա: Այս երեք մակարդակները ներկայացված են ստորև.

- 1-ին մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների ակտիվ շուկաներում գնանշվող գներից (չճշգրտված),
- 2-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներից, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող),
- 3-րդ մակարդակ՝ իրական արժեքները ստացվում են գնահատման հնարքների միջոցով, որոնք ներառում են ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

27.1 Ֆինանսական գործիքների իրական արժեքի չափում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական գործիքներ

Խմբի ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքները համարվում են իրական արժեքի խելամիտ գնահատում:

Առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները իրացվելի են կամ կարճաժամկետ են, ուստի ենթադրվում է, որ հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը գնահատվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով՝ կիրառելով այն շուկայական տոկոսադրույքները, որոնք Խումբը հաշվետու ամսաթվի դրությամբ պետք է վճարեր համանման ժամկետում և ապահովվածությամբ փոխառություն ստանալու համար՝ համանման տնտեսական միջավայրում համանման արժեքով օգտագործման իրավունքի ձևով ակտիվի ձեռքբերման նպատակով: Ամենազգալի փոփոխականը զեղչման տոկոսադրույքն է:

Խմբի ֆինանսկան գործիքները դասակարգվում են իրական արժեքի հիերարխիայի 2 մակարդակում:

28 Կապիտալի ռիսկի կառավարում

Խումբն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունը և բաժնետերերին բավարար եկամուտ մատակարարի:

Խմբի կապիտալը կազմված է սեփական կապիտալից բաշխված մայր ընկերության բաժնետերերի միջև, որը ներառում է թողարկված կապիտալը, պահուստներն ու կուտակված շահույթը:

Ղեկավարությունը գնահատում է Խմբի կապիտալի պահանջները, որպեսզի ապահովի ընդհանուր ֆինանսավորման էֆեկտիվ կառուցվածք՝ խուսափելով չափազանց մեծ լծակավորումից (լեվերիջ): Խումբը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Խումբը կարող է փոփոխել բաժնետերերին վճարվող շահաբաժնի գումարը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆիանանսական լծակը հավասար է զրոյի, քանի որ Խմբի կապիտալը կազմված է միայն սեփական կապիտալից (2022թ.՝ զրո):

29 Պարտավորվածություններ

29.1 Կապիտալ ներդրումների գծով պարտավորվածություններ

Խումբը պայմանագրեր է կնքել 4,747,737 հազար դրամի հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ ձեռք բերելու նպատակով (2022թ.՝ 5,191,035 հազար դրամ):

30 Պայմանականություններ

30.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

30.2 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարությունը համոզված է, որ Խումբը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները և վստահ է, որ Խումբը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանում շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն ու օրենսդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

31 Կապակցված կողմեր

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերությունները, հիմնական ղեկավար անձնակազմը և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

31.1 Վերահսկողություն

Խումբը վերահսկվում է «Արամայո Ինվեսթմենթս Լիմիթեդ»-ի կողմից, որին պատկանում է Ընկերության բաժնետոմսերի 100%-ը: Խմբի գլխավոր մայր ընկերությունն է «Սիստեմա» բաժնետիրական ֆինանսական կորպորացիան, որը գրանցված է Ռուսաստանում և գտնվում է ք. Մոսկվա 125 009, փ. Մոխովայա 13 հասցեում:

2024թ. Ընկերությունը հայտարարել է իր բաժնետիրոջ փոփոխության մասին (տե՛ս ծանոթագրություն 32):

31.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները, և հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդները հետևյալն են:

Հազար դրամ Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Մայր ընկերություն		
Ծառայությունների մատուցում և ապրանքների վաճառք	2,886,780	1,805,509
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	3,441,393	1,720,853
Տոկոսային եկամտի հաշվեգրում	714,408	602,726
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում	266,564	307,343
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին	1,608,170	1,481,351

Հազար դրամ Մնացորդներ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մայր ընկերություն		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	754,132	1,619,477
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	645,145	978,665
Տրամադրված փոխառություններ	20,895,006	15,703,443
Ընդհանուր վերահսկողության տակ գտնվող ընկերություններ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	87
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	-	550
Հիմնական ղեկավար անձնակազմ		
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	661,045	584,639

32 Հետհաշվեկշռային իրադարձություններ

Նոր բաժնետերեր

2024թ. հունվարին Ընկերությունը հայտարարեց իր բաժնետիրոջ փոփոխության մասին և որ այլևս չի պատկանում ռուսական «ՄՏՍ» խմբին: Ընկերության նոր բաժնետերը «Ֆեդիլքո Գրուպ Լիմիթիդ»-ն է, ընկերություն, որը պատշաճ կերպով ստեղծվել է Կիպրոսում և Նիկոսիայի առևտրային ռեգիստրում գրանցվել է HE 433524 համարի ներքո: «Ֆեդիլքո

Գրուպ Լիմիթիդ»-ի վերջնական շահառուներն են պարոն Չժե Ժանգը և պարոն Կոնստանտին Սոկոլովը: Գործարքն ըստ պատշաճի գրանցվել է 2024թ. հունվարի 23-ին:

Հաշվի առնելով Հայաստանի համար Ընկերության ռազմավարական նշանակությունը՝ «Ֆեդիլքո Գրուպ Լիմիթիդ»-ը «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 20%-ը փոխանցել է Հայաստանի Հանրապետությանը: Գործարքը գրանցվել է 2024թ. մարտի 25-ին:

Անվան փոփոխում

2024թ. մարտի 25-ին ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրացված փոփոխության համաձայն՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն վերանվանվել է «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ի: